ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 35

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26-ը հունվարի 2019թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Ցուցուլյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2017-2018 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին:

   (Զեկուցող ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա.Դավթյան**)

2. ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնների վարիչների ընտրությունների մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումները հաստատելու մասին:

   (Զեկուցող ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն **Ա.Վ. Ցուցուլյան**)

3. Ընթացիկ հարցեր:

   3.1.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների մատակարարման և պահեստավորման բաժինի կանոնադրության հաստատումը/նոր խմբագրությամբ/:

   3.2.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հաշվապահության կանոնադրության հաստատումը /նոր խմբագրությամբ/:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ միաձայն՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> « Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2017-2018 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա.Դավթյան**ի հաղորդումը:

Ա.Դավթյանը նշեց, որ 2018 թ. նոյեմբեր ամսին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերում երկրորդ անգամ առցանց իրականացվել է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2017-2018 ուստարվա ուսանողական հարցումները: Մասնաճյուղի 1426 ուսանողներից հարցմանը մասնակցել են 893-ը: Արդյունքում մասնակցության միջին ցուցանիշը կազմել է 63%, որից առկա ուսուցման համակարգում՝ 73%, հեռակա ուսուցման համակարգում՝ 53%:

Նա նշեց, որ ֆակուլտետների դեկանների գնահատման միջին ցուցանիշը 5.00 հնարավորից եղել է 4.72, ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Տնտեսագիտության ֆակուլտետում՝ 4.88 միավոր, ամենացածրը՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ 4.6 միավոր, Կիրառական արվեստի ֆակուլտետում - 4.72 միավոր, Բնական գիտությունների ֆակուլտետում - 4.68 միավոր, Հեռակա ուսուցման բաժնում՝ 4.8 միավոր, հումանիտար գիտությունների ֆակուլտետի միջին ցուցանիշը կազմել է 4.50:
Ըստ ամբիոնների պատկերը հետևյալն է՝

- Հայոց լեզվի և գրականության-4.49,
- Մանկավարժության և հոգեբանության-4.47,
- Հայոց պատմության և հասարակագիտության-4.52,
- Օտար լեզուների-4.51:

Տնտեսագիտության ֆակուլտետի միջին ցուցանիշը կազմել է 4.66:

Ըստ ամբիոնների պատկերը հետևյալն է՝

- Ընդհանուր տնտեսագիտության-4.65,
- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության-4.70:

Բնական գիտությունների ֆակուլտետի միջին ցուցանիշը կազմել է 4.43:

Ըստ ամբիոնների պատկերը հետևյալն է՝

- Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների-4.04,
- Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության-4.62:

Կիրառական արվեստի ֆակուլտետի միջին ցուցանիշը կազմել է 4.64:

Ըստ ամբիոնների պատկերը հետևյալն է՝

- Գծանկարի, զունանկարի և քանդակի-4.62,
- Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի-4.65:

Համամասնաճյուղային՝ Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի միջին ցուցանիշը կազմել է 4.72 (առկա-4.72, հեռակա- 4.72):

Հեռակա ուսուցման համակարգի միջին ցուցանիշը կազմել է 4.61:

Ըստ ամբիոնների պատկերը հետևյալն է՝

- Հայոց լեզվի և գրականության-4.63,
- Մանկավարժության և հոգեբանության-4.68,
- Հայոց պատմության և հասարակագիտության-4.55,
- Օտար լեզուների-4.65,
- Ընդհանուր տնտեսագիտության-4.65,

- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության-4.72,
- Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների-4.49,
- Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության-4.52:

ԵՊՀ ԻՄ-ում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Տնտեսագիտության ֆակուլտետում՝ 4.66 միավոր, ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետում՝ 4.43 միավոր:

Ուսանողները հարցաթերթի՝ կարծիքների և առաջարկների համար հատկացված հատվածում չեն ներկայացրել դասավանդման որակի և ուսումնական գործընթացի բարելավմանը միտված առաջարկություններ:

Հարցման արդյունքները ուղարկվել են համապատասխան ֆակուլտետներ՝ քննարկելու և վերլուծելու:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

ՈՐՈՇՈՒՄ 35/1

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնների վարիչների ընտրությունների մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումները հաստատելու մասին » հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի հաղորդումը: Նա նշեց, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում ***2018թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2018թ. նոյեմբերի 10-ը*** հայտարարվել է մրցույթ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների տեղակալման համար*:* Նշեց, որ ամբիոնի վարիչի պաշտոնն ընտրովի է և պաշտոնի տեղակալումն իրականացվել է բաց մրցութային ընտրության միջոցով համապատասխան ֆակուլտետներում, համաձայն ընթացակարգի, և

ԵՊՀ ԻՄ-ում նմանատիպ մրցույթների ընդհանուր վերահսկողության համար գործում **Որակավորման մանդատային հանձնաժողով հետևյալ կազմով.**

Նախագահ՝ ՈԻՄՎ պետ **Արկադի Դավթյանը**

Քարտուղար՝ Գիտքարտուղար **Միեր Աթոյանը**

Անդամներ.

ԵՊՀ ԻՄ-ի արհբյուրոյի նախագահ՝ **Ալեքսան Մարգարյանը**

Իրավախորհրդատու՝ **Նարեկ Նազարյանը**

ՄՌԿ բաժնի ավագ մասնագետ՝ **Նարինե Աբազյանը**

Մրցույթ հայտարարվել է հետևյալ ամբիոնների համար.

1. Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի
2. Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի
3. Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի
4. Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի
5. Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի
6. Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի
7. Հայոց լեզվի և գրականության ամբիոնի
8. Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի
9. Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի
10. Մնկավարժության և հոգեբանության ամբիոնի

Հայտարարություն չի տրվել հետևյալ ամբիոնների համար

- Ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի
- Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոնի

Դիմորդներ չեն եղել հետևյալ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար.

1. Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի /**դիմող չի եղել**/
2. Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի /**դիմող չի եղել**/
3. Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի /**դիմող չի եղել**/

Իսկ Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթը **անվավեր է ճանաչվել Լ. Հարությունյանի** իրավունքները ԵՊՀ ԻՄ-ում ամբողջովին վերականգնելու նպատակով:

Ընտրությունները տեղի են ունեցել հետևյալ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների համար.

1. Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոն, եղել է մեկ դիմող՝ **քիմ.գ.թ. դոցենտ Գ. Սիմոնյան**
2. Հայոց լեզվի և գրականության ամբիոն, եղել է մեկ դիմող՝ **բ.գ.թ., դոցենտ Վաչիկ Ավագյան**/
3. Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն, եղել է մեկ դիմող՝բ.գ.թ., դոցենտ **Քրիստինե Հարությունյան**
4. Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն, եղել է մեկ դիմող՝ **տ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Միքայելյան**
5. Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի, եղել է երկու դիմող՝ **ՀՀ նկարիչների միության անդամ, մ.գ.թ. դոցենտ Լիլիթ Ֆլջյանը** և ՀՀ դիզայներների միության **Քրիստինե Հարությունյանը**, որը չուներ անհրաժեշտ հիմքերը մրցույթին մասնակցելու համար/
6. Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի, եղել է մեկ դիմող՝ ՀՀ նկարիչների միության անդամ, արվեստագիտության դոցենտ **Համլետ Ասատրյանը:**

Մյուս կողմից, քանի որ **քիմ.գ.թ. դոցենտ Գ. Սիմոնյանը, բ.գ.թ., դոցենտ Վաչիկ Ավագյանը**, բ.գ.թ., դոցենտ **Քրիստինե Հարությունյանը** ԵՊՀ –ի հիմնական աշխատողներ են և չեն համարվում ԵՊՀ ԻՄ-ի հիմնական աշխատակիցներ, չնայած այն հանգմանքին, լիովին անցել են ամբիոնի վարիչի պաշտոնի համար կայացած մրցույթին սահմանված ընթացակարգին համաձայն, նրանց հետ չենք կարող կնքել երկարաժամկետ պայմանագիր, կնշանակվեն ժ/պ-ներ մինչև 1 տարի ժամկետով, մինչև նոր ընտրությունների անցկացումը:

Ա. Ցուցուլյանը նշեց, որ այս նիստում քննարկվելու է Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում **տ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Միքայելյանի** ընտրության վերաբերյալ **Տնտեսագիտության ֆակուլտետի** գիտական խորհրդի որոշումը հաստատելու հարցը, Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի պաշտոնում **ՀՀ նկարիչների միության անդամ, մ.գ.թ. դոցենտ Լիլիթ Ֆլջյանի** և Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչի պաշտոնում ՀՀ նկարիչների միության անդամ, արվեստագիտության դոցենտ **Համլետ Ասատրյանի** ընտրությունների վերաբերյալ **Կիրառական արվեստի ֆակուլտետի** գիտական խորհրդի որոշումները հաստատելու հարցը: Այս պահին, գիտական խորհրդի նիստին ներկա են Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում Տնտեսագիտության ֆակուլտետում ընտրված **տ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Միքայելյանը,** Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի պաշտոնում **Կիրառական արվեստի ֆակուլտետի** գիտական խորհրդում ընտրված **ՀՀ նկարիչների միության անդամ, մ.գ.թ. դոցենտ Լիլիթ Ֆլջյանը** և Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչի պաշտոնում **Կիրառական արվեստի ֆակուլտետի** գիտական խորհրդում ընտրված ՀՀ նկարիչների միության անդամ, արվեստագիտության դոցենտ **Համլետ Ասատրյանը:**

Տնօրեն Ա. Ցուցուլյանը նշեց, որ ըստ գործող կարգի գիտական խորհրդում պետք է անցկացնենք փակ, գաղտնի քվեարկություն հաստատելու համար Կիրառական արվեստի ֆակուլտետի և Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդների համապատասխան ամբիոններիի վարիչների պաշտոններում կայացած ընտրությունների վերաբերյալ, որի համար անհրաժեշտ է ընտրել հաշվիչ հանձնաժողով: Ա. Ցուցուլյանը առաջարկեց հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկել ԵՊՀ ԻՄ-ի արհբյուրոյի նախագահ Ա. Մարգարյանին, ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանին և ուսանող Մարգարիտ Թամրազյանին:

Որոշեցին /25 կողմ, 1 ձեռնպահ, 1 դեմ/

ՈՐՈՇՈՒՄ 35/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 35-րդ կետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը՝

- ԵՊՀ ԻՄ-ի արհբյուրոյի նախագահ Ա. Մարգարյան, (հաշվիչ հանձնաժողովի նախագահ)
- ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյան
- ուսանող Մարգարիտ Թամրազյան:

Տնօրեն Ա. Ցուցուլյանը նշեց, որ մինչև քվեարկությունը ներկաները կարող են հարցեր ուղղել թեկնածուներին.

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի գործունեության հետ կապված՝ **տ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Միքայելյանին,** Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի գործունեության հետ կապված՝ **ՀՀ նկարիչների միության անդամ, մ.գ.թ. դոցենտ Լիլիթ Ֆլջյանին,** Գծանկարի,

գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչի գործունեության հետ կապված՝ ՀՀ նկարիչների միության անդամ, արվեստագիտության դոցենտ **Համլետ Ասատրյանին:**

Հարցեր **տ.գ.դ. պրոֆեսոր Միքայել Միքայելյանին, ՀՀ նկարիչների միության անդամ, մ.գ.թ. դոցենտ Լիլիթ Ֆլջյանին,** ՀՀ նկարիչների միության անդամ, արվեստագիտության դոցենտ **Համլետ Ասատրյանին չինչեցին և** հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մարգարյանը ներկայացրեց քնեարկության կարգը:

Այնուհետև անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն:

Այնուհետև հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մարգարյանը ներկայացրեց փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները.

Գիտական խորհրդի 35 անդամներից ներկա էին 27 -ը:

Քվեարկվել են.

- **Ընդհանուր տնտեսագիտության** ամբիոնի վարիչի պաշտոնում **Տնտեսագիտության ֆակուլտետի** գիտական խորհրդի ընդունված որոշման հաստատումը:
- **Գծանկարի, գունանկարի և քանդակի** ամբիոնի վարիչի պաշտոնում **Կիրառական արվեստի** ֆակուլտետի գիտական խորհրդի ընդունված որոշման հաստատումը:
- **Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի** ամբիոնի վարիչի պաշտոնում **Կիրառական արվեստի** ֆակուլտետի գիտական խորհրդի ընդունված որոշման հաստատումը:

Քվեարկությանը մասնակցել են գիտական խորհրդի 26 անդամներ:

Բաժանվել է 26 քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 26 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ __25___ կողմ, ___1___դեմ, ____0___անվավեր,

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ __25___ կողմ, ___1___դեմ, ____0___անվավեր,

ՖԼՋՅԱՆ ԼԻԼԻԹ ___24__ կողմ, ___2___դեմ, ___0____անվավեր,

Անվավեր քվեաթերթիկների քանակը __0____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով հաստատվել են.

- ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու մասին:
- ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու մասին:
- ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ ԼԻԼԻԹ ՖԼՋՅԱՆԻՆ Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու մասին:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 24 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 35/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 9-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 9-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:
2. Ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր համաձայն ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ընթացիկ հարցեր:

3.1 Լսեցին - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների մատակարարման և պահեստավորման բաժինի կանոնադրության/նոր խմբագրությամբ/ հաստատումը հարցի վերաբերյալ:

Որոշեցին

Որոշում 35/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գնումների մատակարարման և պահեստավորման բաժինի կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2013թ. մարտի 30-ի թիվ 1 նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի

մասնաճյուղի գնումների մատակարարման և պահեստավորման բաժինի կանոնադրությունը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3.2 **Լսեցին** - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հաշվապահության կանոնադրության հաստատումը /նոր խմբագրությամբ/ հաստատումը հարցի վերաբերյալ:

Որոշեցին

Որոշում 35/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հաշվապահության կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/՝ համաձայն հավելված 2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2013թ. դեկտեմբերի 25-ի թիվ 6 նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հաշվապահության կանոնադրությունը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա.Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ